



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՐԴ

ք. Երևան

22.01.2018թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի

թիվ ԳԲԽ-ԷՍ-2017/56

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը՝ (այսուհետ՝ նաև խորհուրդ) քննելով «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի 22.12.2017թ. ներկայացրած բողոքը (այսուհետ՝ նաև Բողոք) և կից փաստաթղթերը, պարզեց հետևյալը.

1. «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի ներկայացրած փաստերը, հիմնավորումները և պահանջը.

«Հրաշք Այգի» ՍՊԸ-ն (այսուհետ՝ նաև Ընկերություն) ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին 22.12.2017թ. ներկայացրել է բողոք, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) 2017թ. դեկտեմբերի 11-ի N 3 որոշմամբ հրավեր է ներկայացվել ՀՀ Ազգային ժողովի կարիքների համար՝ էլեկտրական և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով:

Վերոնշյալ գնման հրավերի առարկայի 3-րդ չափաբաժնում նախատեսված է գնել խոտինձիչ մեքենա, որի մատակարարման համար հայտ է ներկայացնել նաև «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն: Հանձնաժողովի կողմից 18 դեկտեմբերի 2017թ. ժամը 12:00-ին կազմվել է թիվ 2 արձանագրությունը, որի 2-րդ կետի համաձայն՝ մասնակիցներից «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնով առաջարկել է 549,000 դրամ և բացի արժեքից ներկայացրել է ԱԱՀ-ի

գումար՝ 109,800 դրամ: Վերոնշյալ արձանագրության 4-րդ կետի համաձայն՝ 3-րդ չափաբաժնով «Հրաշք Այգի» ՍՊԸ-ն ճանաչվել է 2-րդ, իսկ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն՝ 1-ին տեղ զբաղեցրած մասնակից, որպես առավել ցածր գնային առաջարկ ներկայացրած մասնակից:

Գտնում ենք, որ հանձնաժողովի ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19 ծածկագրով 18 դեկտեմբերի 2017թ. թիվ 2 արձանագրությամբ մասնակիցներից «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնելու որոշման համար հիմք է հանդիսացել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից սխալ տեղեկատվության տրամադրումը, ուստի այն անհիմն է հետևյալ հիմնավորմամբ.

Համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի.

«ԱԱՀ-ից ազատելը՝ հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: ԱԱՀ-ից ազատվում են սույն օրենքի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, և 3-րդ կետերով նշված հետևյալ գործարքները և գործառնությունները՝ իսկ 6-րդ հոդվածի համաձայն ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի, ինչպես նաև ԱՏԳ ԱԱ դասակարգչի 0106 41 000, 0106 90 00 90, 5305 00 000 0, 9406 00 310 0 ծածկագրերին դասվող ապրանքների իրացումը»:

Խոստինձիչ մեքենան ընդգրկված է ՀՀ ԱՏԳ ԱԱ 8433 դասակարգչում, հետևաբար, դրա մատակարարման գործարքը ազատված է ավելացված արժեքի հարկից: Իսկ քննարկվող դեպքում «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ներկայացրել է գնային առաջարկում ԱԱՀ-ի գումարը և դրանով անհիմն առավելություններ է ստացել»:

Հիմք ընդունելով վերոգրյալ փաստական և իրավական հիմնավորումները և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածով՝ Ընկերությունը խնդրել է փոփոխել ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 18 դեկտեմբերի 2017թ. ժամը 12:00-ի կազմված թիվ 2 արձանագրության 4-րդ կետը և գնման առարկայի 3-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ին:

Ի լրումն ներկայացված Բողոքի՝ Ընկերությունը 28.12.2017թ. գրությամբ Ընկերությունը ներկայացրել է Բողոքի լրացում, որով հայտնել է հետևյալը.

«ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 8-րդ ենթակետի համաձայն՝

այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար(...)»:

Հաշվի առնելով, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19 ծածկագրով գնանշման հարցման հրավերով ներկայացրել է կեղծ տեղեկատվություն, որը վերաբերում է գնման առարկայի ԱԱՀ-ի հարկմանը՝ Ընկերությունը խնդրել է Բողոքում ներկայացված պահանջը լրացնել հետևյալ բովանդակությամբ. փոփոխել ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19 ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 22 դեկտեմբերի 2017թ. ժամը 12:00-ի կազմված թիվ 3 արձանագրության 1-ին կետով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնով հաղթող մասնակից ճանաչելու որոշումը:

Բողոքի քննության նպատակով Խորհրդում տեղի ունեցած նիստերին մասնակցում էր Ընկերության լիազորված ներկայացուցիչ Միքայել Ավետիսյանը:

2. ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից բողոքի վերաբերյալ ներկայացված փաստերը, հիմնավորումները և դիրքորոշումը.

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմը (այսուհետ՝ նաև Պատվիրատու) 27.12.2017թ. գրությամբ «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի կողմից 22.12.2017թ. Խորհրդին ներկայացված բողոքի վերաբերյալ հայտնել է հետևյալը.

«ՀՀ Ազգային ժողովի (այսուհետ՝ Պատվիրատու) կողմից էլեկտրական և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով ընթացակարգ, որի 3-րդ չափաբաժնով նախատեսված՝ «խոտինձիչ մեքենա» գնման առարկային մասնակցելու համար հայտ են ներկայացրել «Հրաշք այգի» ՍՊԸ-ն և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն:

«Հրաշք այգի» ՍՊԸ-ն հայտի հավելված N 5 գնային առաջարկով վերը նշված ապրանքի համար առաջարկել է 630.000 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ-ի, իսկ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն իր կողմից ներկայացված գնային առաջարկում նշել է՝ արժեք 549.000 ՀՀ դրամ, ԱԱՀ՝ 109.800 ՀՀ դրամ, ընդհանուր գին՝ 658.800 ՀՀ դրամ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը որոշվում է՝ բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

Օրենքի 34-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց սույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց սույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Պատվիրատուն 18.12.2017թ. ժամը 12:00-ին տեղի ունեցած նիստի N2 արձանագրության 4-րդ կետով կայացված որոշմամբ ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին (որպես

նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի), իսկ երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչել «Հրաշք այգի» ՍՊԸ-ին:

Ինչ վերաբերում է «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից բողոքով հայտնած այն դիրքորոշմանը, որ խոտհնձիչ մեքենան ընդգրկված է ՀՀ ԱՏԳ ԱԱ 8433 դասակարգչում, հետևաբար, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի՝ դրա մատակարարման գործարքը ազատված է ԱԱՀ-ից, ուստի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն գնային առաջարկում նշելով ԱԱՀ-ն տրամադրել է սխալ տեղեկատվություն, ապա այս կապակցությամբ հայտնում ենք, որ Պատվիրատուն ղեկավարվելով վերը նշված իրավական նորմերով՝ մասնակիցների կողմից ներկայացված գները համեմատել է առանց ԱԱՀ-ի, հետևաբար բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված 22.12.2017թ. բողոքն անհիմն է և ենթակա է մերժման:

Խորհրդի նիստերին մասնակցում էր Պատվիրատուի լիազորված ներկայացուցիչ Արսեն Ավագյանը:

3. ԳԲԽ-ԷՍ-2017/56 բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը, խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը.

Խորհուրդն ուսումնասիրել է «Հրաշք այգի» ՍՊԸ-ի կողմից 22.09.2017թ. ներկայացված բողոքը և կից փաստաթղթերը, ի լրումն Բողոքի ներկայացված՝ Ընկերության 28.12.2017թ. գրությունը, «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերը (այսուհետ՝ նաև Հրավեր), «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ նաև Հանձնաժողով) 18.12.2017թ. ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի N 2, 22.12.2017թ. ժամը 12:00-ի նիստի N 3 արձանագրությունները, «Հրաշք այգի» և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ների կողմից ներկայացված հայտերի պատճենները, Պատվիրատուի դիրքորոշումը և կարծիքը:

ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի կողմից էլեկտրական և կենցաղային սարքավորումների ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցում (այսուհետ՝ նաև Ընթացակարգ), որի 3-րդ չափաբաժնով

նախատեսված «խոտհնձիչ մեքենա» գնման առարկայի մասով ի թիվս այլ մասնակիցների մասնակցության հայտեր են ներկայացրել «Հրաշք այգի» և «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ները:

Հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 12:00-ի հայտերի բացման նիստի N 2 արձանագրության 2-րդ կետի համաձայն՝ Ընթացակարգի շրջանակներում «Հրաշք այգի» ՍՊԸ-ի հայտի N 5 հավելվածով ներկայացված ընդհանուր գնային առաջարկը կազմել է 630,000 ՀՀ դրամ (գնի առաջարկ առանց ԱԱՀ), իսկ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված ընդհանուր գնային առաջարկը՝ 658,800 դրամ, որից գնի առաջարկն առանց ԱԱՀ-ի կազմել է 549,000 դրամ, իսկ ԱԱՀ-ն՝ 109,800 դրամ:

Նույն արձանագրության 4-րդ կետով Հանձնաժողովը որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին՝ որպես առավել ցածր գին ներկայացրած մասնակից, իսկ 3-րդ չափաբաժնի մասով երկրորդ տեղ զբաղեցրած մասնակից ճանաչել «Հրաշք այգի» ՍՊԸ-ին:

Հանձնաժողովը՝ ուսումնասիրելով առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող հրավերով նախատեսված փաստաթղթերը, 22.12.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով որոշել է 1-ին, 2-րդ և 3-րդ չափաբաժինների մասով Ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին:

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքներով Պատվիրատուն տեղեկագրում հրապարակել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը, որի համաձայն՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն 3-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է ընթացակարգի հաղթող (ընտրված) մասնակից, իսկ «Հրաշք այգի» ՍՊԸ-ն՝ նույն չափաբաժնի մասով 2-րդ տեղ զբաղեցրած մասնակից:

«Հրաշք այգի» ՍՊԸ-ն Խորհրդին ներկայացրած բողոքով հայտնել է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչելու մասին Հանձնաժողովի որոշման համար հիմք հանդիսացած՝ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի գնային առաջարկը ներկայացված է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի պահանջների խախտմամբ: Մասնավորապես, «խոտհնձիչ մեքենա» ապրանքատեսակը դասվում է «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված այն ապրանքատեսակների դասակարգչին, որոնց մատակարարման գործարքն ազատված է ավելացված արժեքի հարկից:

Բողոքի քննության նպատակով 28.12.2017թ. տեղի ունեցած նիստի ժամանակ Պատվիրատուի ներկայացուցիչն ընդունեց այն փաստը, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից

ներկայացված գնային առաջարկը ներառել է ավելացված արժեքի հարկի բաղադրիչ՝ միաժամանակ նշելով, որ Հանձնաժողովի կողմից մասնակիցների գնային առաջարկների գնահատումն իրականացվել է գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով, այն է՝ մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նշված հարկի գումարի հաշվարկման: Ուստի «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին ընթացակարգի 3-րդ չափաբաժնի մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից ճանաչելու որոշումը պայմանավորված է եղել այն հանգամանքով, որ վերջինիս կողմից ներկայացված գնային առաջարկի «արժեք» բաղադրիչը (գին առանց ԱԱՀ) կազմել է 549 000 ՀՀ դրամ, ինչը պակաս է «Հրաշք այգի» ՍՊԸ-ի գնային առաջարկից, որը կազմել է 630,000 ՀՀ դրամ (գին առանց ԱԱՀ):

«Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 86-րդ հոդվածի համաձայն՝ իրավական ակտը մեկնաբանվում է դրանում պարունակվող բառերի և արտահայտությունների տառացի նշանակությամբ՝ հաշվի առնելով օրենքի պահանջները և իրավական ակտի մեկնաբանությամբ չպետք է փոփոխվի դրա իմաստը:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի՝

•1-ին հոդվածի համաձայն՝ ավելացված արժեքի հարկը (այսուհետ՝ ԱԱՀ) անուղղակի հարկ է, որը սույն օրենքի համաձայն վճարվում (գանձվում) է պետական բյուջե՝ ապրանքների ներմուծման, Հայաստանի Հանրապետության տարածքում դրանց արտադրության ու շրջանառության, ինչպես նաև ծառայությունների մատուցման բոլոր փուլերում:

•15-րդ հոդվածի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատելը հարկվող շրջանառության նկատմամբ այն չհաշվարկելն է: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ ԱԱՀ-ից ազատվում են հետևյալ գործարքները և գործառնությունները՝ ԱՏԳ ԱԱ դասակարգչի 8432, 8433, 8434, 8436, 8701 ծածկագրերին դասվող տեխնիկայի և մասերի, 31 ապրանքախմբի ծածկագրերին դասվող պարարտանյութերի, 3808 91, 3808 92, 3808 93, 3808 94, 3808 99 ապրանքախմբի ծածկագրերին դասվող թունաքիմիկատների, գյուղատնտեսական մշակաբույսերի և բազմամյա տնկարկների սերմացուների և տնկանյութի իրացումը:

Արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) 8433 դասակարգչին են դասվում՝ մեքենաներ կամ մեխանիզմներ գյուղատնտեսական կուլտուրաները հավաքելու ու կալսելու համար՝ ներառյալ մամլիչ-հասկահավաքները, ծղոտը կամ խոտը հակավորող մամլիչները, խոտինձի մեքենաները կամ սիզամարգերի հնձիչները(...):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ նաև Օրենք) 34-րդ հոդվածի՝

• 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

• 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը որոշվում է բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցների թվից՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցին նախապատվություն տալու սկզբունքով:

• 3-րդ մասի համաձայն՝ եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձին տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումն ու համեմատումն իրականացվում են առանց նույն մասում նշված հարկի գումարի հաշվարկման:

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի գնի հաշվարկը պետք է ներառի տվյալ գնման պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերի, տուրքերի, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն դրոշմամբ հաստատված՝ «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 32-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում, մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում են առանց նույն ենթակետում նշված հարկի գումարի հաշվարկման:

«ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցման հրավերի՝

• 5.1 կետի համաձայն՝ առաջարկվող գինը ապրանքի արժեքից բացի ներառում է փոխադրման, ապահովագրման, տուրքերի, հարկերի, այլ վճարումների գծով ծախսերը և չի կարող պակաս լինել դրանց ինքնարժեքից: Առաջարկվող գնի հաշվարկը պետք է ներկայացվի հայտով համակարգի միջոցով:

• 5.2 կետի համաձայն՝ մասնակիցը գնային առաջարկը ներկայացնում է արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) և ավելացված արժեքի հարկ ընդհանրական բաղադրիչներից բաղկացած հաշվարկի ձևով: Արժեքի բաղադրիչների հաշվարկ՝ բացվածք կամ այլ մանրամասներ չեն պահանջվում և ներկայացվում: Եթե մասնակիցը տվյալ գործարքի գծով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե պետք է վճարի ավելացված արժեքի հարկ, ապա ներկայացվող գնային առաջարկում առանձնացված տողով նախատեսվում է այդ հարկատեսակի գծով վճարվելիք գումարի չափը: Ընդ որում մասնակիցների գնային առաջարկների գնահատումը և համեմատումն իրականացվում է առանց սույն կետում նշված հարկի գումարի հաշվարկման:

Այսպիսով, Խորհուրդն արձանագրում է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկում ներառվել է ավելացված արժեքի հարկի բաղադրիչ, որը կազմել է 109,800 ՀՀ դրամ:

Խորհուրդն արձանագրում է նաև, որ Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով նախատեսված «խոտհնձիչ մեքենան» դասվում է արտաքին տնտեսական գործունեության ապրանքների միասնական անվանացանկի (ԱՏԳ ԱԱ) 8433 դասակարգչին, հետևաբար, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի համաձայն՝ դրա մատակարարման գործարքն ազատված է ավելացված արժեքի հարկով հարկումից:

Խորհուրդը գտնում է, որ «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ն՝ հայտով ներկայացված գնային առաջարկում առանձնացված տողով ԱԱՀ-ի գծով վճարվելիք գումար նախատեսելով՝ ներկայացրել է իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություն:

Խորհուրդը գտնում է նաև, որ Հանձնաժողովը՝ բավարար գնահատելով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված գնային առաջարկը և վերջինիս Ընթացակարգի 3-րդ չափաբաժնով առաջի տեղ զբաղեցրած, իսկ այնուհետև՝ ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներ ընդունելով՝ գործել է ոչ իրավաչափ՝ խախտելով Օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով, 2-րդ մասի 1-ին կետով, 3-րդ մասով, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, Կարգի 32-րդ կետի 2-րդ ենթակետով, ինչպես նաև Հրավերի 5.2 կետով սահմանված պահանջները:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի «բ» և «գ» ենթակետերով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

1. «Հրաշք Այգի» ՍՊԸ-ի կողմից 22.12.2017թ. ներկայացրած բողոքը բավարարել:


2. Դադարեցնել «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցման գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 12:00-ի կայացած նիստի թիվ 2 արձանագրության 4-րդ կետով «Տիգման Գրուպ» ՍՊԸ-ին 3-րդ չափաբաժնով 1-ին տեղը զբաղեցրած մասնակից ճանաչելու և 22.12.2017թ. ժամը 12:00-ին կայացած նիստի N 3 արձանագրության 1-ին կետով՝ նույն չափաբաժնով հաղթող մասնակից ճանաչելու որոշումները:

3. Պարտավորեցնել Հանձնաժողովին «ՀՀ ԱԺ ԳՀԱՊՁԲ-17/19» ծածկագրով գնանշման հարցման 3-րդ չափաբաժնով 1-ին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչել «Հրաշք Այգի» ՍՊԸ-ին:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

**ՀՀ գնումների բողոքարկման
խորհրդի անդամ՝**



ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ